ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Արդի միջազգային հարաբերություններում անվտանգության ապահովման հիմնախնդիրները մնում են պետությունների կենսագործունեության առանցքային ուղղություն: Պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և ազգային շահերի ապահովման առումով զինված ուժերը անվտանգության համակարգի կարևորագույն բաղադրիչ են: Դրանց արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ոչ միայն բուն ռազմական կարողություններով, այլև այդ ուժերի կառավարման, հաշվետվողականության և ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների առկայությամբ: Այս համատեքստում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը համարվում է որպես ժողովրդավարական կառավարման հիմնարար սկզբունք և իրավական պետության կարևորագույն հատկանիշ:

Քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը հատկապես կարևորվել են հետսառըպատերազմյան շրջանում, երբ բազմաթիվ երկրներում բարեփոխվել են պետության կառավարման, անվտանգության և պաշտպանության ոլորտները: Ժողովրդավարական քաղաքական համակարգերում զինված ուժերի նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը հնարավորություն է տալիս ապահովելու ռազմական ինստիտուտների գործունեության թափանցիկությունը, կանխելու իշխանության չարաշահումները, բարձրացնելու հասարակական վստահությունը և ամրապնդելու պետական ինստիտուտների լեգիտիմությունը: Միաժամանակ, քաղաքացիական վերահսկողությունը նպաստում է պաշտպանության ոլորտում ռազմավարական որոշումների կայացման գործընթացի արդյունավետությանը և պետության

անվտանգային քաղաքականության համապատասխանեցմանը ազգային շահերին: Ներկայումս պետությունները բախվում են ոչ միայն ավանդական ռազմական սպառնալիքների, այլև հիբրիդային պատերազմների, տեղեկատվական ազդեցությունների, կիբեռանվտանգության մարտահրավերների, միջազգային ահաբեկչության, տարածաշրջանային հակամարտությունների և բազմաբնույթ այլ ռիսկերի: Այսպիսի պայմաններում անվտանգության համակարգի արդյունավետությունը պայմանավորում են պետական ու հասարակական կառույցների արդյունավետ փոխգործակցությունը, դրա բարձր մակարդակը, իսկ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը վերածվում է ազգային անվտանգության ապահովման կարևոր միջոցի:

Հայաստանի Հանրապետության համար թեման առանձնահատուկ նշանակություն ունի՝ պայմանավորված մեր շուրջ ընթացող ռազմաքաղաքական գործընթացների առանձնահատկություններով և վերջին տարիների անվտանգային մարտահրավերներով: 2020 թվականի պատերազմը, տարածաշրջանային ուժային հարաբերակցության փոփոխությունները, սահմանային անվտանգության մերօրյա խնդիրները և պաշտպանության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտությունը նորովի են փաստում ՀՀ զինված ուժերի արդյունավետ կառավարման և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման կարևորությունը: Ըստ այս իրողությունների անհրաժեշտ է առնվազն վերահմաստավորել պաշտպանության ոլորտում պետական և հասարակական վերահսկողության դերակատարումը, գնահատել գործող մեխանիզմների արդյունավետությունը և բացահայտել դրանց զարգացման հնարավոր խնդիրներն ու հնարավորությունները:

Սույն թեման արդիական է նաև Ռուսաստանի Դաշնության փորձի ուսումնասիրման տեսանկյունից: Ռուսաստանը հետխորհրդային տարածքի խոշորագույն ռազմաքաղաքական դերակատարներից է, ունի զինված ուժերի կառավարման և քաղաքացիական վերահսկողության վաղուց ձևավորված համակարգ ու համապատասխան ընթացակարգեր: Չնայած երկու պետությունների (ՀՀ և ՌԴ) քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ առանձնահատկություններին, դրանց միջև առկա պատմական, իրավական ու ռազմավարական կապերը հնարավորություն են տալիս իրականացնելու համեմատական ուսումնասիրություն և բացահայտելու թե դրանց

ընդհանրությունները, և թե տարբերությունները՝ պաշտպանության ոլորտի կառավարման և վերահսկողության գործընթացներում: Համեմատական վերլուծությունը կարևոր է ոչ միայն տեսական գիտելիքների հարստացման, այլև գործնական առաջարկությունների մշակման առումով:

Եվ, վերջապես, թեմայի գիտական արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ քաղաքացիական վերահսկողության հիմնախնդիրը քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, անվտանգային հետազոտությունների, իրավագիտության և հանրային կառավարման գիտակարգերի խաչմերուկում է: Հետևաբար, դրա ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս միջոլորտային համալիր տեսաքննությամբ դիտարկել պետությունների անվտանգային համակարգերի ինստիտուցիոնալ զարգացումը, պետական կառավարման արդյունավետությունը և այդ գործընթացներում հասարակության մասնակցության մեխանիզմները: Միաժամանակ, քաղաքացիական վերահսկողության արդյունավետության գնահատումը նպաստում է անվտանգության բազմամակարդակ համակարգերի վերաբերյալ տեսական պատկերացումների զարգացմանը:

Ատենախոսությունը ձևակերպված է ակադեմիական ոճով, աշխատանքը կառուցվածքայնորեն բաժանված է գլուխների և ենթագլուխների, որոնցում համապատասխանաբար քննարկվում են տվյալ թեմաներին առնչվող գիտակիրառական նշանակության տարբեր խնդիրներ:

Այնուամենայնիվ, **Ս. Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի խնդիրներ, որոնք նկատառելը էականորեն կբարձրացնի աշխատանքի հետազոտական արժեքը: Դրանցից հատկանշական են՝

1. Ատենախոսության մեջ ներկայացված զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների համեմատականը ՀՀ-ի և ՌԴ-ի միջև խիստ տարակուսելի է, քանի որ համեմատության մեթոդը գիտությունը կիրառում է առաջին հերթին նկատառելով օբյեկտների համեմատելիությունը, ինչն այս դեպքում խիստ թույլ է արտահայտված ու վիճելի

է (թե պետությունների կառավարման համակարգերի, ռազմաքաղաքական հզորությունների, և թե քաղաքական ռեժիմի առումներով):

2. Ատենախոսության արդիականության բաժնում (էջ 3) անդարադարձ է կատարված 2016 թ. ապրիլյան, 2020 թ. 44-օրյա և 2022 թ. սեպտեմբերի 13-ի մարտական գործողություններին և նշված է, որ բացահայտվել են զինծառայողների իրավունքների պաշտպանության, ռեսուրսների կառավարման և վարքային դրսևորումների, զինված ուժերի տեխնիկական ու մասնագիտական համակարգային խնդիրները, որոնց անմիջական առնչությունը զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության հետ խիստ թույլ և վիճելի է:
3. Աշխատանքում օգտագործված աղբյուրների, մասնավորապես Ա. Շահվերդյանի, Գ. Քեռյանի և Մ. Վարդազարյանի և համապատասխան այլ գիտական հոդվածները էական առնչություն չունեն հետազոտության թեմայի հետ, և պարզ չէ, թե ինչու են վերոնշյալ աշխատությունները ատենախոսը կիրառել իր հետազտության մեջ:
4. Հետազոտության օբյեկտը և առարկան շարադրված են բավական անհասկանալի և վիճելի ձևակերպումներով: Մասնավորպես, մի դեպքում որպես հետազոտության օբյեկտ է ներկայացված քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների փոխլրացուցչությունը, իսկ առարկան՝ մեխանիզմների ձևավորման իրավաքաղաքական նախադրյալները և դրանց ինստիտուցիոնալացման գործոնները, որոնք, ըստ էության, շատ անորոշ ու ընդհանրական ձևակերպումներ են, չափելի չեն և իբրև հետազոտության արդյունք՝ու փաստարկում, լիարժեք չեն:
5. Հետազոտության գիտական նորույթներ բաժնում անդրադարձ է կատարված զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության կիրառմամբ դրանց արդյունավետության բարձրացմանը, սակայն բուն հետազոտության մեջ արդյունավետության բարձրացման հստակ չափումներ չկան, ավելին պարզ չէ թե որքանով է այդ պնդումը համարվում գիտական նորույթ:
6. Ատենախոսության 5-րդ էջում ատենախոսը նշում է, որ քաղաքացիական վերահսկողությունը բազմամակարդակ անվտանգային համակարգերի դիմակայության կարևոր բաղադրիչ է, սակայն համապատասխան հղումներով և օրինակներով չի հիմնավորում այդ պնդումը: Ավելին՝ խիստ անհասկանալի է, թե

քաղաքացիական վերահսկողությունն՝ անմիջականորեն ինչ կապ ունի անվտանգության և բազմամակարդակ դիմակայության խնդիրների հետ:

7. Ատենախոսության 20-րդ էջում հեղինակը նշում է, որ բանակը հնարավորություն է տալիս դիմակայելու ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սպառնալիքներին, բացի այդ, ըստ ատենախոսի, բանակը պետական իշխանության և կարգի պահպանման լծակ է: Սա խիստ վտանգավոր և հակասական դատողություն է, քանի որ պետության ներքին անվտանգային խնդիրներն ու սպառնալիքները լուծում են ուժային այլ կառույցներ՝ բացառապես ըստ օրենսդրությամբ վերապահված իրավունքի:
8. Հետազոտության 32-րդ էջում ատենախոսն անդրադառնում է քաղաքացիական հասարակության և բանակի նույնականացման փորձերին՝ նշելով որ զինված ուժերի կառավարման հիերարխիկ մեխանիզմների ներդրումը քաղաքացիական հասարակությունում կարող է վտանգել հասարակության հիմնարար արժեքները: Սակայն պարզ չէ թե ինչ նպատակով է արված այս դատողությունը, քանի որ բանակը լինելով հասարակության մի մասնիկը կոչված է լիովին այլ նպատակների և ունի կառվարման այլ գործառույթներ: Հետևաբար՝ ԶՈՒ-ն ու հասարակությունը միմյանց փոխլրացնող ինստիտուտներ և ոչ թե նույնականացման կարիք ունեցող հասկացություններ են:
9. Աշխտանքում օգտագործված տարբեր տեղերում օրինակ 57-րդ էջում նշված դատողությունները (2021 թ. Սոթք-Խոզնավար հատվածում տեղի ունեցած միջադեպերը հանգեցրել են մարդկային կորուստների և գերեվարման դեպքերի... 2022 թ. արձանագրվել են բազմաթիվ քրեական վարույթներ դավաճանության դեպքերով...) էապես կապ չունեն զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության հետ:
10. Ատենախոսը աշխատության 81-րդ էջում անդրադարձել է զինված ուժերում ատեստավորման գործընթացին և կասկածի է ենթարկել դրա օբյեկտիվությունը՝ հանձնաժողովներում քաղաքական դերակատարների ներգրավվածության պատճառով: Այս համատեքստում կարծում եմ, որ վերոնշյալ պնդումը անհիմն հայտարարություն է, քանի որ հընթացս զինծառայողների ատեստավորումը ՀՀ ԶՈՒ-ում կատարվում է բավական օբյեկտիվորեն ու արդյունավետորեն, որը նպաստում է ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության բարձրացմանը: Ավելին՝ սա

թեմային չառնչվող վտանգավոր տեսակետ է, քանի որ դրանով, կարծես, հեղինակազրկվում է ՀՀ ԶՈՒ-ը:

Այսպիսով, **Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերոնշյալ թերությունները չեն ստվերում սույն աշխատանքի գիտականությունը և ատենախոսը կարող է հրապարակային պաշտպանությամբ արժանանալ ԻԳ.00.02 – քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտացմամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Նարեկ Հրանտի Գրիգորյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

09.06.2026 թ.